«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 92/5

25-ը սեպտեմբերի 2026 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Կանաչ համալսարանի» հայեցակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի «Կանաչ համալսարանի» հայեցակարգը համաձայն հավելվածի,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

Հավելված 4

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2026թ. սեպտեմբերի 25 -ի նիստի թիվ 92/5 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Մ. Մ. Օթարյան

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Կանաչ համալսարանի» հայեցակարգ
(Green Campus Policy)

1. Ներածություն

Սույն հայեցակարգը մշակվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ կամ ԵՊՀ ԻՄ) կողմից՝ որպես շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության, կայուն զարգացման սկզբունքների ներդրման և համալսարանական համայնքի էկոլոգիական գիտակցության բարձրացման մոտեցումների համակարգ:

Հայեցակարգը մշակվել է ՀՀ օրենսդրության, ԵՊՀ ԻՄ կանոնադրության, ԵՊՀ ԻՄ 2025-30թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 3-րդ նպատակի, ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և այլ նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հայեցակարգը հիմնված է նաև միջազգային լավագույն փորձի վրա, ներառյալ UI GreenMetric, QS Sustainability չափորոշիչները, ինչպես նաև Եվրոպական «EU GREEN» ալյանսի քաղաքականության սկզբունքները:

2. Հայեցակարգում օգտագործվող հիմնական հասկացությունները

«Կանաչ համալսարան» (Green University) - բարձրագույն ուսումնական հաստատություն, որի կառավարման, կրթական և հետազոտական համակարգերում ներդրված են կայուն զարգացման և բնապահպանական սկզբունքներ: Այս գաղափարի հիմնական նպատակն է նվազեցնել բուհի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և ձևավորել էկոլոգիապես գրագետ սերունդ:

«Կանաչ» կրթություն (Green Education) **-** կրթական այնպիսի մոտեցում, որը միտված է սովորողների շրջանում բնապահպանական գիտակցության, կայուն զարգացման արժեքների և էկոլոգիական մտածողության ձևավորմանը:

«Կայուն զարգացում» - մարդկության այնպիսի զարգացումն է, որը բավարարում է ներկայի կարիքները՝ առանց վտանգելու ապագա սերունդների՝ իրենց սեփական կարիքները բավարարելու կարողությունը:

«Ածխածնային հետք» (Carbon Footprint) - այն ջերմոցային գազերի (հիմնականում՝ ածխաթթու գազի՝ CO_2) ընդհանուր քանակն է, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով արտանետվում են մարդու, կազմակերպության, միջոցառման կամ արտադրանքի կենսագործունեության հետևանքով: Այն չափվում է տոննաներով կամ կիլոգրամներով՝ CO_2 էկվիվալենտով (CO_2e):

«Շրջանաձև տնտեսություն» (Circular Economy) - տնտեսական մոդել է, որի հիմքում ընկած է արտադրության և սպառման այնպիսի համակարգ, որտեղ հումքը, նյութերն ու արտադրանքը օգտագործվում են հնարավորինս երկար**,** իսկ թափոնների առաջացումը հասցվում է նվազագույնի:

3. ԵՊՀ ԻՄ տեսլականը

Մասնաճյուղը ձգտում է դառնալ տարածաշրջանում «կանաչ» կրթության և կառավարման մոդելային հաստատություն՝ նվազեցնելով իր ածխածնային հետքը, խթանելով էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաները և ձևավորելով գիտակից սերունդ:

4. Հիմնական սկզբունքներ

Մասնաճյուղը «Կանաչ համալսարանի» իր հայեցակարգի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները.

1. **Ռեսուրսների օգտագործման արդյունավետություն**. էներգիայի, ջրի և նյութերի սպառման նվազեցում:
2. **Ներգրավվածություն**. ուսանողների, դասախոսների և աշխատակազմի ակտիվ մասնակցություն էկո-նախաձեռնություններին:
3. **Թափանցիկություն.** առաջընթացի պարբերական մոնիտորինգ և հանրային հաշվետվողականություն:
4. **Տարածաշրջանային ինտեգրում.** տեղական համայնքի հնարավորությունների օգտագործում (գետի առկայություն, թափոնների հեռացման աջակցություն, էկոլոգիական ծրագրերին ներգրավում):

5. Հայեցակարգի հիմնական նպատակները (2026-2029թթ.)

«Կանաչ համալսարանի» հայեցակարգի իրականացման աշխատանքները իրականացվելու են երեք փուլով՝ հիմնադրում, գործողությունների ընդլայնում և ձեռքբերումների ամրապնդում:

Միջնաժամկետ ծրագրերի համար կարևորվելու են հետևյալ նպատակները.

1. **Էներգիա.** Նվազեցնել էլեկտրաէներգիայի ծախսը 10%-ով (բազային տարվա համեմատ)՝ օգտագործելով LED լուսավորություն և սարքավորումների արդյունավետ շահագործում :

2. **Թափոններ.** Ներդնել թափոնների տարանջատման համակարգ (պլաստիկ, թուղթ, ապակի) շենքերի 100%-ում:

3. **Ջրի ծախսի կառավարում.** Նվազեցնել խմելու ջրի սպառումը կանաչապատման ոռոգման ժամանակ (օգտագործել գետի ջուրը):

4. **Ուսումնական ծրագրեր.** Ներդնել 3 նոր ընտրովի դասընթացներ կամ մոդուլներ կայուն զարգացման թեմաներով:

5. **Տրանսպորտ.** Խրախուսել հեծանվային տրանսպորտը և քայլելը (անվտանգ կայանատեղիների ստեղծում):

6. Գործողությունների ծրագիր

5.1. Էներգիայի ծախսի կրճատում և բազմազանեցում

- Քայլ 1. LED-ացում. Աստիճանաբար փոխարինել բոլոր լյումինեսցենտային և շիկացման լամպերը LED-երով (սկսած միջանցքներից):
- Քայլ 2. Արևային մարտկոց. Առկա փոքր մարտկոցը օգտագործել բակային լուսավորության կամ տեղեկատվական տախտակների էլեկտրամատակարարման համար; նոր հզորությունների տեղադրման ուսումնասիրություն:
- Քայլ 3. Գազի կաթսաների կարգավորում. Տարեկան սպասարկում և ջերմաստիճանի ռեժիմի օպտիմալացում (դասասենյակներում +19-21°C):

5.2. Ջրի ծախսի կառավարում

- Քայլ 1. Ոռոգում. Տնկիների, ծառերի և ծաղկանոցների ոռոգման համար օգտագործել մոտակա գետի ջուրը (պայմանավորվածություն համայնքի հետ):
- Քայլ 2. Տնտեսում. Օգտագործել կաթիլային ոռոգում բակի կանաչապատ տարածքի և ծառերի ոռոգման համար:
- Քայլ 3. Խնայողություն. Սանհանգույցներում տեղադրել ջրի հոսքը սահմանափակող վարդակներ/գլխիկներ (aerators):

5.3. Թափոնների կառավարում

- Քայլ 1. Աղբի տարանջատված հավաքում. Տեղադրել գունավորված աղբամաններ աղբի 3 տեսակների համար՝ թուղթ, պլաստիկ և այլ:
  - ***Բյուջե.*** *Աղբամանները կարող են տրամադրվել համայնքի կողմից կամ ձեռք բերվել դրամաշնորհի միջոցներով:*

- Քայլ 2. Թղթի խնայողություն. Ներքին փաստաթղթերի համար պարտադիր երկկողմանի տպագրություն (Duplex printing), միաժամանակ անցնել որոշ փաստաթղթերի միայն էլեկտրոնային ձևաչափով պահպանմանը՝ անհրաժեշտ ուսումնասիրություններից հետո:

5.4. Կանաչ տարածքներ

- Քայլ 1. Ծառատունկ. Բակում և գետափի հարակից տարածքում տնկել խոնավասեր, տեղական ծառատեսակներ (ուռի, թխկի)՝ ոռոգման համար օգտագործելով գետի ջուրը:

- Քայլ 2. Ուսանողական այգի. Հատկացնել փոքր հողատարածք դիզայնի ուսանողների համար՝ որպես «Էկո-դիզայն» լաբորատորիա:

5.5. Ուսումնական և հետազոտական ծրագրեր

- «Կանաչ մոդուլ». Ստեղծել 3 ECTS-անոց ընտրովի մոդուլ «Կայուն զարգացում և բիզնես» (տնտեսագիտության համար) և «Էկո-դիզայն» (դիզայնի համար):

- Նախագծեր. Խրախուսել շրջանավարտների ավարտական աշխատանքների թեմաները՝ կապված տեղական էկոլոգիայի հետ (գետի աղտոտվածություն, զբոսաշրջության ածխածնային հետք և այլն):

5.6. Սոցիալական ներգրավվածություն

- «Զրո թուղթ». Ուսումնական նյութերը (սիլաբուսներ, առաջադրանքներ) հիմնականում տեղադրել Moodle/Google Classroom-ում:

- «Էկո-ակումբ». Ստեղծել ուսանողական ակումբ՝ էկո-նախաձեռնությունների մշակման, կամավորական աշխատանքների կազմակերպման և իրականացման համար:

- Համագործակցություն դպրոցների հետ. Դպրոցականների համար «Թափոնների կառավարում» դասընթացի անցկացում ուսանողների կողմից:

- «Կանաչ կիրակի». Ամսական մեկ անգամ կազմակերպել աղբահավաք գետի ափին (ուսանողների և տեղական դպրոցականների հետ համատեղ):

7. Կառավարում և պատասխանատվություն

Հայեցակարգի իրականացմանը հետևելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ «Կանաչ գրասենյակ» (Green Office), որի աշխատակիցներն են՝ տնօրենության ներկայացուցիչը, 2 դասախոս, 3 ուսանող:

Գրասենյակի պարտականություններն են.

1) համակարգել հայեցակարգի իրականացումը,

2) հավաքել բազային ցուցանիշները (սպառումը մինչև գործընթացների սկսելը),
3) աջակցել դրամաշնորհային հայտերի պատրաստմանը,
4) կազմել անհրաժեշտ ռեսուրսների և նյութերի պահանջագրեր, հետևել դրանց ձեռքբերման գործընթացին, կազմակերպել դրանց կիրարկումը,
5) իրականացնել գործունեության ինքնագնահատում կամ մոնիթորինգ,
6) իրականացնել կատարողականի արդյունավետության ցուցիչKPI գնահատում,
7) յուրաքանչյուր կիսամյակ հրապարակել «Կանաչ թերթիկ» (1 էջանոց հաշվետվություն),
8) առաջարկել բարելավումներ,
9) անհրաժեշտության դեպքում կազմակերպել անձնակազմի վերապատրաստումներ,
10) մշակել տարեկան (կամ երկու տարվա համար) գործողությունների մանրամասն ծրագիր:

8. Ֆինանսավորում

Հայեցակարգի դրույթների և հերթական գործողությունների պլանի իրականացման համար որպես ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդես գալ.

1. Մասնաճյուղի բյուջեն. LED լամպերի և ջրախնայող սարքերի ձեռքբերում:
2. Մայր բուհի օգնությունը. «Էներգաարդյունավետության» ծրագրերին դիմելու համար:
3. Բնապահպանական դրամաշնորհները.
   - Erasmus+ (Green Deal) – ուսումնական մոդուլների մշակման համար,
   - Global Greengrants – աղբահավաքի և տարանջատման համար,
   - Եվրոպական Green Initiative – արևային մարտկոցի արդիականացման համար:

9. Ռիսկերի կառավարում

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի նման փոքր բուհի համար «Կանաչ համալսարան» հայեցակարգի ներդրումը կարող է հանդիպել մի շարք ռիսկերի, որոնք բնորոշ են սահմանափակ ռեսուրսներ ունեցող բուհերին:

Հայեցակարգի ներդրման և լիարժեք իրականացման արդյունավետության համար սկզբնական փուլում կարելի է առանձնացնել հետևյալ ռիսկերը և դրանց կառավարման մեխանիզմները.

– Ֆինանսական սահմանափակումներ.

Շրջանցման եղանակը. Սկսել փոքր, ցածր բյուջեով նախաձեռնություններից (օրինակ՝ թղթի կրկնակի օգտագործում, LED լուսավորություն) և աստիճանաբար ընդլայնել: Դիմել ԵՊՀ աջակցությանը՝ առաջարկելով համատեղ ծրագրեր: Դիմել հանրապետական և միջազգային դրամաշնորհային ծրագրերի:

– Ուսանողների և աշխատակազմի իրազեկվածության և ներգրավվածության պակաս.

Շրջանցման եղանակը. Օգտագործել արդեն հաստատված մեթոդները՝ աշխատակիցների և ուսանողների վերապատրաստումներ, ուսանողական հարցումներ, ֆոկուս-խմբեր, «կանաչ ակումբներ»: Ուսանողների կողմից ղեկավարվող նախաձեռնությունները հաճախ ավելի արդյունավետ են, քան վերևից ներքև մոտեցումները: ԵՊՀ օրինակը՝ «Երկրի օրվան» նվիրված էկոլոգիական միջոցառումները, ծառատունկը և վիկտորինաները, ցույց են տալիս, որ փոքր քայլերը կարող են ակտիվացնել համայնքը:

– «Կանաչ» մոդուլների բացակայություն ուսումնական ծրագրեր ում.

Շրջանցման եղանակը. Սկսել 1-2 ընտրովի մոդուլից, ապա աստիճանաբար ինտեգրել կայունության թեմաները առկա դասընթացներում (օրինակ՝ տնտեսագիտության մեջ՝ «կանաչ» տնտեսություն, դիզայնում՝ էկո-դիզայն): Օգտվել T-GREEN ծրագրի փորձից, որը մշակել է «կանաչ» և միջառարկայական մագիստրոսական ծրագրեր հայաստանյան բուհերի համար: Համագործակցել միջազգային գործընկերների հետ՝ մեթոդական աջակցության համար:

– Ենթակառուցվածքային սահմանափակումներ.

Շրջանցման եղանակը. Կենտրոնանալ ցածր ներդրում պահանջող լուծումների վրա՝ սենսորային լուսավորություն, ջրի խնայող սարքեր, թափոնների տարանջատման կետեր: Օգտվել գործընկերությունից տեղական համայնքի հետ թափոնների հեռացման հարցում: Ինչպես ՀԱՊՀ-ն է արել՝ ամբողջությամբ անցնել արևային էներգիայի՝ որպես երկարաժամկետ նպատակ՝ սկսելով փոքր ծավալներից:

– Ուսանողների մոտիվացիայի կորուստ ժամանակի ընթացքում.

Շրջանցման եղանակը. Ստեղծել ճանաչման և խրախուսման համակարգ՝ «Կանաչ վկայական» 20+ ժամ կամավորական աշխատանք կատարած ուսանողների համար, «Կանաչ դասասենյակ» մրցույթ: Ուսանողներին ներգրավել որոշումների կայացման գործընթացում՝ նրանց տալով սեփականատիրության զգացում:

– Համայնքի աջակցության բացակայություն.

Շրջանցման եղանակը. Սկսել «փոքր հաղթանակներից»՝ վստահություն կառուցելու համար (համատեղ աղբահավաք կամ մաքրման օր մասնաճյուղի հարակից տարածքում): Փոքր կանաչ տարածքի կամ ծաղկանոցի ստեղծում,

որտեղ համայնքի բնակիչները կարող են մասնակցել տնկմանը: Կապել նախաձեռնությունները համայնքի անմիջական կարիքների հետ: Կազմակերպել համատեղ քննարկումներ (օրինակ՝ «համայնքային սրճարան» կամ «քաղաքապետարան» մեթոդով), որտեղ բնակիչները կարող են բարձրաձայնել իրենց մտահոգությունները և առաջարկները: Ստեղծել համակարգող խումբ, որտեղ ընդգրկված են ինչպես համալսարանի ներկայացուցիչներ, այնպես էլ համայնքի ակտիվ անդամներ:

10. Մոտակա քայլերի իրականացման ժամանակացույց (Ճանապարհային քարտեզ)

Ժամանակահատված	***Գործողություն***	***Պատասխանատու***
2-րդ ամիս	«Կանաչ գրասենյակի» ձևավորում, բազային ցուցիչների հավաքագրում	Տնօրենություն
4-րդ ամիս	LED-ացման 1-ին փուլ (դասասենյակներ), գունավոր աղբամանների տեղադրում	ՏԳԿՍ բաժին
5-րդ ամիս	«Կանաչ մոդուլի» փորձնական դասընթաց (15-20 ուսանող)	ՈԻՄՎ, ամբիոն
6-րդ ամիս	«Կանաչ կիրակի» արշավի մեկնարկ, հեծանվակայանների կազմակերպում	Ուսանողական խորհուրդ
8-րդ ամիս	Միջանկյալ հաշվետվություն, գրանտային հա յտի ձևակերպում	«Կանաչ գրասենյակ»
10-րդ ամիս	Տարեկան «Կանաչ հաշվետվության» հրապարակում (UI GreenMetric ինքնագնահատում)	«Կանաչ գրասենյակ»

11. Մոնիտորինգ և գնահատում (KPI-ներ)

Ցուցանիշ (KPI)	***Նպատակային արժեք (1 տարում)***	***Հաշվարկման մեթոդ***
Էլեկտրաէներգիայի սպառում	- 7% (LED-երի շնորհիվ)	Ըստ էլեկտրահաշվիչների
Տարանջատված թափոնների տեսակարար կշիռ	≥30% (պլաստիկ + թուղթ)	Կշռման մեթոդ
Ուսանողների մասնակցությունը	200 ուսանող «Կանաչ կիրակիին»	Մասնակիցների ցուցակ
«Կանաչ» մոդուլների ընդգրկում	1 նոր մոդուլ, 40 ուսանող	Գրանցման տվյալներ
CO_2 արտանետումների	- 5% (կաթսաների	Գազի ծախսի տվյալներ

նվազեցում	օպտիմալացում, ջերմամեկուսացում)	
Թղթի օգտագործում	- 10% տարեկան (էլ. փաստաթղթավարում)	Բյուջեի կատարողականի թվեր
Կանաչ հետազոտություններ թիվ	Տարեկան առնվազն 5 հրատարակություն	Գիտության ոլորտի հաշվետվություններ
Ծառերի թիվ	+ 10% (ծառատունկ)	Գրանցված ծառերի հաշվման մեթոդ

12. Տեղական հնարավորությունների օգտագործում

Գործողությունների ծրագրով նախատեսված աշխատանքների արդյունավետ իրականացման համար կարելի է օգտվել տեղական, համայնքային, տարածաշրջանային հնարավորություններից.

- Գետի ջուրը. Մասնաճյուղի հարակից տարածքով հոսող գետի առկայության պայմաններում արգելվում է խմելու ջրով լվանալ մեքենաները կամ ոռոգել կանաչ տարածքը և ծառերը: Այդ նպատակների համար օգտագործել գետի ջուրը, որը պոմպերով կարելի է տեղափոխել, նաև հավաքել հատուկ բաքերում և օգտագործել ոռոգման և կանաչապատման աշխատանքների ժամանակ;
- Թափոնները. միանալ համայնքի թափոնների հեռացման ծրագրին՝ կնքելով պայմանագիր համայնքի հետ տարանջատված պլաստիկը և թուղթը անվճար կամ նվազագույն գնով վերցնելու համար:
- Սեզոնայնությունը. ձմռանը գետի ջրի սառելու և նվազելու պայմաններում դադարեցնել կամ նվազեցնել ոռոգման աշխատանքները՝ կենտրոնանալով միայն սենյակային բույսերը և ծաղիկները ջրելու վրա:

13. Արդյունքների տեսանելիության ապահովում

13.1. Մասնաճյուղի կայքում ստեղծել «Կանաչ համալսարան» բաժին՝ լուսաբանելու համար հայեցակարգի և ընթացիկ գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը և արդյունքները:

13.2. Տեղադրել «Այս դասարանը օգտագործում է LED լուսավորություն», «Ոռոգվում է գետի ջրով» բովանդակությամբ QR կոդով ցուցանակներ:

13.3. Ուսումնասիրել UI GreenMetric World University Ranking-ի պահանջները՝ փորձնական մասնակցության հնարավորությունների դիտարկման համար:

14. Հայեցակարգի հաստատում և փոփոխում

Սույն հայեցակարգը հաստատվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Գիտական խորհրդի կողմից:

Այն կարող է փոփոխվել Մասնաճյուղի ներքին իրավական ակտերին համապատասխան՝ տնօրենի, «Կանաչ գրասենյակի» ղեկավարի և գիտական խորհրդի անդամների առաջարկությունների հիման վրա: